ցիր այս աշխարհի հոգսերից: Ահա իմ տունը, իմ զավակը թող քեզ լինեն այն բարիքի փոխարեն, որ արիր իմ հանդեպ: Այս ասաց, չգնաց իր տունը, այլ գնաց եկեղեցու դուռը, համբուրեց, հագավ տրեխները, գլխարկը դրեց գլուխը, փեղույրն (քահանայի թասակը) ու կոշիկները փաթաթեց փիլոնի մեջ և ճանապարհ ընկավ, ուղղվեց դեպի Սևան: Ոչ ոք նրա գնալը չտեսավ, և ոչ ոք չիմացավ նրա ուր լինելը, ոչ ոք ճանապարհին չպատահեց:

Գնաց, հասավ Սևանի նավահանգիստը, կանչեց, բերին նավը և մտավ անապատը և միաբաններին աղաչանքով պատվիրեց, որ ոչ մի տեղ իր մասին որևէ բան չասեն: Իսկ գյուղացիները մելիքին ասացին՝ չէ՞ որ դու ես կորցրել մեր քահանային, այդ պատճառով նրա արյունը քեզնից ենք պահանջում: Մելիքը մարդ ուղարկեց մոտիկ գյուղերը, բայց վերադարձավ դատարկ:

Տասն օր հետո միաբանները անապատից եկան ու պատմեցին, թե Մխիթարը Սևանում է: Մելիքը գյուղացիներից ոմանց առավ, գնացին Սևան: Հանցանքը հանձն առան, շատ աղաչանքներով խնդրեցին վերադառնալ: Բայց նրանց չլսեց, այլ մնաց այնտեղ, մշտամատույց ու մաքուր խղճով աղոթում էր իր Տիրոջը:

Հայոց կաթողիկոս Փիլիպոսը լսեց նրա բարի համբավը, մարդ ուղարկեց, նրան բերին Սուրբ աթոռ Էջմիածին, նրան օրհնեց եպիսկոպոս և կրկին ուղարկեց Սևան՝ հովվելու միաբաններին: Գնաց և անապատի վերակացությունը վարեց բարի կենցաղավարությամբ և փոխվեց անմահական (հանդերձյալ) կյանքը և թաղվեց այնտեղ մեր 1111 (1662) թվին ի փառս Քրիստոս Աստծու:

ԳԼՈՒԽ ԽԶ
ՋԱՖԱՐ ՓԱՇԱՅԻ ՈՍԿՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ Թահմազղուլի խանը Վժանի (Ուջան) դաշտում կոտորեց քրդերին, մեծամեծներից ոմանց բռնեց, կնդեց, ուղարկեց Մեծ Շահ Աբասին, իսկ նա հրամայեց մերկացնել և նետել առյուծների առջև երեք մարդ իր զորքի հաճույքի համար: Ապա Ջաֆար փաշայի մասին հարցրեց, թե որտե՞ղ է նրա գեշը, ասացին, թե՝ Թավրիզում: Մարդ ուղարկեց հանել բերել իր մոտ: Եվ մանրեց կացնով դիակը,

խառնեց գարու հետ, աղաց, դարձրեց ալյուր, թխեց հաց և մանրելով գցեց շների առջև, շները կերան: Եվ այսպես վրեժով էր լցված օսմանցիների նկատմամբ:

ԳԼՈՒԽ ԽԷ
ՕՍՄԱՆՅԻՆԵՐԻ ԱՐՄԱՏՅԱՆ ԳԱՎԱՌ ԳՆԱԼԸ

Կարինից վերադարձան Կարսի պարոնները, որոնք կոչվում էին աջապահ և ձախապահ աղաներ: Սրանք մեղադրեցին Շխիջան փաշային, թե ինչո՞ւ չպատերազմեցիր Թահմազղուլի խանի դեմ, երբ նա եկավ քո երկրի սահմանները, Շխիջանը պատասխանեց՝ թե դուք այստեղ չէիք, իսկ իմ զորքը ցաք ու ցրիվ էր եղել, ինչո՞վ դիմադրեի պարսից զորքին: Արդ՝ այժմ պատրաստ եղեք, որ մենք էլ արշավենք նրանց վրա: Քանզի Ամիրգունա խանը մեռել էր, իսկ նրա որդի Թահմազղուլի խանը գնացել էր Վրաստան Թամրազի դեմ: Այս պատճառով օսմանցիք հավաքվեցին և գնացին Շիրակ և Նիգ[106] գավառները և Արա լեռան հյուսիսային կողմից անցան Կոտայքի գավառը: Ինչ որ գտան, ավարեցին ու եկան Եղվարդ[107] գյուղը և շրջապատեցին սրա ամրոցը: Գյուղացիները նրանց դեմ կռվում էին քարով: Իսկ օսմանցիք համբերեցին մինչև նրանց քարերը սպառվեցին: Ապա հեշտությամբ գրավեցին ամրոցը և ամրոցի մարդկանցից սպանեցին երեսուն մարդու և գերեցին, ինչ որ գտան ամրոցում՝ մարդ, անասուն: Բռնեցին նաև Ծատուր անունով մի մարդու, հետևը կապեցին ձեռքերը և ծեծում էին (բնագրում ձաղեին՝ պետք է լինի ձաղկեին) նրան, որպեսզի ինչքերը ցույց տա, քանզի գյուղապետն էր: Իսկ նա ցնցելով կտրեց կապը և երդիքով ընկավ մի տուն և ինչ-որ հնարքով ելավ առաստաղը և ոտքերով ու ձեռքերով բռնեց գերանը և մնաց կախված: Օսմանցիք մտան տուն, որոնեցին, չգտան: Ելան դուրս ու գնացին փախուստով, քանզի լսեցին, թե Թահմազղուլի խանը վերադարձել է Վրաստանից ու գալիս է: Օսմանցիք շտապելով Աշտարակի կամրջով գնացին Թալինի վրայով իրենց երկիրը՝ Կարս: